




THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

CHICAGO, ILL. 60637
U.S.A.

1964-1965



ԱՐԾՈՒՒ

ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՄՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՏՈՍՊ

ԱՍՏՈՒ, 1856

ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՒ 8

ՀԱՅՐԵՆԱՍՈՒՐԱԿԱՆ

ՆՈՐ ԱՐԾՈՒՒՆ ՄՈՎՍԷՍ ԻՍԿՈՋԻՆ ՆՈՐՈՅ ՏԱՐՈՅՍ ԼԱՅ ԶԱՆՅԵՏԱԿԱՐԶ
ՓԱՌՍ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԵՐՈՅ .

ՈՐ 'ի Մուշ Տարօնայ 'ի վերայ հո-
վասուն լերին առ հովանեօք Առաքե-
լոց վանից ննջես զհաղարամեայ քուն
քաղցրութեան , ո՞ խորենեան ծե-
րունիդ Մովսէս , զարթիր զարթիր 'ի
վեր առ 'ի շիրմէդ զգլուխդ հանճա-
րալից . ակնարկեա միանգամ եւս սի-

րակաթ եւ արտօսրալէժ աչօքդ 'ի
ցանկալին քո . Հայաստան . տես 'ի
նոյն դժբախտութեան կայ տակաւին
անցին գնացին շրջանակք 'ի հաղար-
ամաց անդր դեռ ոչ նորոգեցան վա-
ղեմի փառքն իւր . Յեա ձիւնաբեր
սառնապաւ ձմերան բողբոջին կրկին

յեղանալիս զարնայնոյ ծաղկունք, 'ի
յերկրէ. արեւն յետ մտանելոյ իւրոյ
'ի մայրն՝ դարձեալ 'ի նմանէ ծնեալ
ծագի եւ շառաւիղս արձակեալ
բարձրանայ անդրէն 'ի միջօրեայ կա-
մարն. արծուին յիւր ծերութենէն
նորակեալ թեւօք մանկանաց. լու-
սինն 'ի նուազին հնդեռասանօրեայ
ժամանակաւ՝ միւսանգամ պատա-
րուն բոլորակ լուսով պայծառանայ.
Բայց, միայնակ Հայաստանն է, որ ոչ
նորոգեալ ծաղիկ յիւր թառամեալ
փառաց, որ ոչ ըստ արեւուն նման
նոր ծագեալ 'ի մօրէն բարձրանայ
'ի կատարն Մասեաց. որ ոչ լուսնին
հանգոյն բոլորապսակ թաղիւս սքը-
նեալ զարդարի եւ 'ի սպառեալ փա-
ռաց նուազութենէն՝ կրկնակի լրա-
թեամբ լուսոյ ճոխանայ:

Երթ հապա, Արծուիդ իմ, սլա-
ցիր արագապէս 'ի Տարօն, կաց 'ի
վերայ շիրմի խորնոյ ողբերգու ծե-
րունոյն, ձայն տուր նմին եւ ոսկերցն
զի ելեալ ընդ քեզ հարցէ հողացեալ
մատամբք իւրովք զիւր ողբերգու-
թեան քնար. զոր երբեմն այն ինչ
յԱթենայ դարձեալ առ տապալաւ
երանելոյն Մետրուկայ հարկանէր
այսպէս:

Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ,
ողբամ զքեզ հանուրց հիւսիսակա-
նաց վեհագոյն. որ քան զՄասիս երկ-
նամբարձ մեծութեամբ ճոխացեալ
բարձրացեալ կայիր 'ի միջի Այրա-
րատայ. 'ի զարմացումն կարգեալ հա-
մօրէն աշխարհի ազգաց եւ ազանց.
արդ խնարհեալ փոքրկացար այնչափ
մինչեւ չերեւիս աչաց:

Ողբամ զքեզ, Արշակունեան
գահդ, Վաղարշապատ արքունի քա-

ղաքդ. ճւր է փառք պանծալի Թա-
գիդ. ճւր է պսակ վայելչութեան
քոյին. Պարծաւ այս 'իքէն, ԲՀ, արդ-
անշքացեալ դու նստիս իբրեւ զբա-
տրուկ, եւ թափուրացեալ յիշխա-
նանիստ տանց եւ սպարանից եղեր
իբրեւ զգեղկաբնակ:

Ծաղիկք Արշակունեան փառաց
թափեալ 'իքեզ թառամեցան 'ի հա-
զար ամաց հեռէ. երբ գայցէ քեզ
զարուն աւետաւոր. որով դար-
ձեալ ծաղկեացին 'իքեզ քաջազուն
բողբոջք եւ ըստ առանցնոյն գեղով
վայելչութեան զարդարիցիս:

Ողբամ զքեզ նազելիդ Անի
Քաղրատունեան գահդ, ամայու-
թիւն քոյին մերձ է հասանիլ մինչեւ
ցհազար ամ. նշխարք մնացուածոյ
աւերակացդ որք նշան են առաջնոյ
պերճութեան քոյին՝ ճմլեցուցանին
զսիրտս, ոչ միայն հայկազուն ճեմու-
ղացն. այլ եւ օտարազարմ աշխար-
հաշրջիկ ճանապարհորդացն որք ցան-
կալի երրատառ անուանդ փափագե-
լով դիմեն գան 'ի հեռաւոր երկրէ
եւ շրջեալ 'ի միջի խուռն աւերա-
կացդ՝ նշմարին 'ի նմա զանցեալ
վայելչութիւն փառաց քոց. եւ 'ի
տախտակի նկարեալ զքանչելի գեղըդ
հռչակեն յընդհանուրս 'ի զարմա-
ցումն ազգաց օտարաց եւ յողբումն
տարաշխարհիկ գաղթական որդւոցդ:
Երբ արդեօք շինեսցիս դու դարձեալ
որպէս զԵրուսաղէմ, երբ արդեօք
քեզ այցելու ելցէ ձեռն Զօբաբա-
բէլեան. երբ դաճցին 'ի մայրենի
ծոցդ վարատեալ եւ ցրուեալ որդիք
քոյին. երբ յաշխարհամուտ դրա-
նէդ մտցեն եւ ելցեն բազմութիւն
խուռն ժողովրդոցդ. երբ կիսակոր-

ծան կամարք հազար եւ մի եկեղեց-
եաց կրկին 'ի վեր կանգնեցին .
էրբ ժողովեցին հօտ խաշանց 'ի մա-
կաղատեղ գաւթիդ՝ էրբ սրբեցին սե-
ղաքդ եւ նուիրեցի 'ի նմա զոհ
անարիւն պատարագին . էրբ յետ
բաղնաժամանակեայ ձմերանդ՝ եկես-
ցէ քեզ գարուն նորոգիչ եւ 'ի հողա-
բլուր աւերակացդ 'ի վեր ծլեալ
ծաղկեցին քաջաբողբոջ բոյսք . էրբ
ելցեն յարգաւանդաբեր դաշտդ
Շիրակայ մշակք վաստակաւորք եւ
եղինք հերկագործողք . էրբ խոյտա-
լով կայտոեցին գաւինք 'ի հովիտ
ծսղկաբեր ձորոցդ . էրբ այրիդ տա-
ռապեալ բաղնաորդովք բերկրեալ
խնդասցէ եւ ուրախամիտ լեալ բնա-
կեցի յանմարդի տանդ . որով մեծ
լիցին վերջին փառք քո քան զառա-
ջինն :

Ողբամ զքեզ Արծրունեան գահդ
Վասպուրական երկիրդ . ողբամ ըզ-
քեզ Ռատան արքունի քաղաքդ . ող-
բամ զքեզ Հայոց ձոր գեղեցիկ դառ-
տակերդ Հայկայ մեր նախնոյն . ող-
բամ զձեզ առ հասարակ ճոխադոյն
գաւառք Քաջաբերունեան, Բաշտու-
նեան եւ Մոկաց . ո՞ւր քաջազարմ
ճնոք Արծրունեան Գաղիկ եւ Սե-
նէքէրիմ, ո՞ւր ազատատոհմ Հայկա-
սերունդ նախարարութիւնք խորխո-
ռունիք, Բզնունիք, Քաջաբերունիք .
որք բախ բոլորեալ կային շուրջ ըզ-
վանայ ծովակաւն . արդ խաղառ ջըն-
ջեալ անհետացան 'ի սահմանաց քոց՝
այլ ոչ եւս դու յղացեալ ծնանիս
վերստին զնոյն քաջազն որդիս, թէ
եւ երկունք ցաւոց հայրենասէր սրբ-
տից ստիպեցեն զքեզ անդրէն ծը-
նանիլ, ոչ որպէս զառաջինն զՀակայ-

ապերճ դիւցազունս՝ այլ զկատարեալս
հասակաւ եւ իմաստութեամբ եւ 'ի
տիա հանձարոյ եւ գիտութեան ա-
ճեալ եւ զարգացեալ :

Ողբամ զքեզ Տարօնոյ ցանկալի
գաւառդ , արքայատուր պարգեւ
Մամիկոնեան զարմին . աւանդ, սպա-
ռեցան 'ի քէն եւս զօրավարք անձ-
նանուէրք վրէժխնդիրք եկեղեցւոյ ,
պարսկադէնին յաղթողք , քակիչք
ատուշանացն , խորտակիչք հրապաշ-
տիցն վարդանեանք եւ վահանեանք
Մուշեղ եւ Մանուէլ եւ մանաւանդ
գայն քո վահան Մուշեղեան պա-
տառիչ այծերամ սեւագունդ Պար-
սից, նոր ոմն զարմանալի Ողիւսէս
'ի քեզ երեւեալ հնարագիւտ հան-
ձարով : Ահ , պանծալիդ Տարօն,
այլ ոչ եւս տեսանին 'ի քեզ այս ա-
րի սպառազէնք , այս վրէժխնդիրք
հայրենեաց , այս նահատակք յաղ-
թողք :

Ի քնարանէ գերեզմանիդ զայս 'ի
վեր առեալ շուրջ զքեւ հայեաց
այժմիկ , ողբերգուդ Մովսէս , տես
որպիսում դառն վիճակի հասեալ է
արդ հայրենին քո Տարօն : Եր յայն-
ժամ լայիր դառնապէս մինչ տակա-
ւին գտանէին 'ի Հայաստան աշխար-
հին մերում ճիւղք քաջատոհմիկ ող-
կուզաց . որպիսի ողբս յօրինէիր դու
այժմ, եթէ կենդանի լեալ տեսնե-
իր , եթէ զի արդ եւ այն մնացեալ
ճիւղք քաջաց պակասեցան յայգւոյն
Հայոց . եւ այժմ 'ի հազարաւորաց
սակաւաւորք մնացին եւ այն յոյժ
ողորմելիք եւ եղիկելիք : Արկնեա առ-
տանօր Հայր , աւանդ զրկանացս , որ-
պէս հանդուրժեցից պատմել զվեր-
ջին աղետս հայրենի տան քո : Զոր-

ահա զօրավարք Հայոց վարդան եւ վահան բարձեալ եղեն իբրու ըզր Մովսէսն այն եւ չիք ոք Յետու ՚ի տեղի նոցին : Սահակ եւ Մեսրոպ դաստիարակ ծնողք եւ սիրասուն աշակերտքդ Մովսէսդ եւ անյաղթ Դաւիթ , իորին եւ Մամբրէ վերածանող , եղծիչ աղանդոց Եզնիկ , Յովսէփ եւ Ղեւոնդ քաջաբան . Աղան Արծրունի եւ Ղազար ճարտասան . Ինչ , այսոքիկ հրաժարեցան վաղ ՚ի Հայաստան աշխարհէն մերոյ . Ո՛վ այսուհետեւ ըստ քում բանի լիցի մեզ Սահակ եւ Մեսրոպ յարգիչ ուսման եւ դաստիարակիչ մանկանց Եկեղեցւոյ եւ յօրինիչ բարեկարգութեանց . Ո՛վ հայրագորով խնամօք շրջեալ ՚ի Հայաստան կանգնեցէ դպրոցս եւ մարդիս մանկտույն . Ո՛վ կարգեցէ զյանդգնութեան բերան հակաակորդացն . որք ընդ դէմ առողջ վարդապետութեան յարուցեալք են ՚ի յետին դարուս , ինքնահնար եւ մտացածին իմաստիւք կամին վարդապետ օրինաց լինել եւ յառաջ քան զտեսութիւն Աստուածաբանք . խօսիլ եւ գրել զոչախորժելիսն Աստուծոյ : Ո՛վ գնոսին ըմբերանեցէ ճշմարտութեան բանիւք սաստելով եւ չափ դիցէ բանից եւ լուութեան :

Ողբամ զձեզ վանորայք եւ մենաստանք Հայոց աշխարհին . որք երբեմն ճեմարան շնորհաց էիք եւ ՚ի ձեզ իբրեւ ՚ի Սաղիմայն վերնատունն ժողովեալ անապատասուն միանձնասէր հարցն պարապէին յուսումն Աստուածային գրոց . եւ առաւելապէս ընկալեալ զբղիսումն շնորհաց գիտութեան իբրեւ զգետ յորդեալ յա

կանց վանորէից , վտակ վտակ բաժանելու ծաւալէին ՚ի ծարաւուս երկիրս Հայոց . յորոց արբեալք առ ճանային օր ըստ օրէ բանեղէն բողբոջ եկեղեցւոյ : Բայց արդ համայն վանորայք լքեալ ամայացան . զի ոչ շրջին ՚ի նոսա ոտք վաստակաւոր Պարթեւականին Ներսիսի եւ ոչ Զուրք հայրական խնամոց նորա առաւելապէս բաշխին ՚ի կղերս եկեղեցւոյ : Որ ինքնին շրջէր անդադար եւ տնօրինէր զհոգս նոցին , հայրաբարոյ առաքինութեամբն նմանեալ նախնոյն իւրոյ Գրիգորի . որ ՚ի Տարօն ՚ի գիւղն Աշտիշատ ժողով արարեալ միաբանութեամբ կարգէր եւ յօրինէր կարգս վանականաց եւ Եկեղեցեաց . որ աղքատանոցս եւ անգեղանոցս շինեալ , ժողովել տայր ՚ի նոսա զպատաժէսս եւ զօրոշկս եւ նոր ոմն սիրադարման Սամարայի երեւեալ ՚ի Հայաստան , պատէր եւ յանձանձէր զվիրաւորեալս մարմնով :

Ողբամ զձեզ , վիրաւորք Հայոց , որբամ զձեզ աղքատք մուրացիկք որ յանցս ճանապարհաց անկեալ հեծէք աղիողորմ եւ ձեռս առ անցաւորս կարկառեալ այցելութիւն խնդրէք :

Երբ յարիցէ ձեզ Ներսէս այցելու . երբ առ ձեւք անցանիցեն աւետարներ ոտք նորին . երբ զվէրս ձեր պատեացեն խնամածու ձեռք բարեխնամ Հօրն . երբ ժողովեցին անյարկ աղքատք եւ դրանէ ՚ի դուռն շրջող մուրացիկք . երբ ողջոյն Հայաստան վայելազարդ կարգօք պայծառացի եւ նոր յաջորդեցէ երջանիկ դար Ներսիսի Աստուածա-

խնամ եւ հայրենազարդ Հօրն :

Եւ երբ լռեսցի արդեօք միմեանց
աղէխարչ ցաւոց ողբաձայն Մովսի-
սիդ . որ եւ յետ անմահ մեռանե-
ոյդ անջինջ արձանագորութեամբդ
գոչես հառաչելով . « Ողորմի՛ւք եղ ,
Եկեղեցի Հայաստանեայց , խրթնաց-
եալ 'ի բարեզարդութենէ բեմ-
բին , 'ի քաջէն զըկեալ հովուէ եւ
հովուակցէ » :

Օրկեցաք արդարեւ , Հայր , աւանդ
դժբախտութեանս մերոյ . զի եղաք
մեք անարժան որդիք յետս կասեալ 'ի
բարեմասնութենէ առաքինի Հարցն
սլոց հոգիագորով ծնողացն :

Որ ամենորոյ 'ի պատիժ անպիտա-
նութեան մերում , եբարձ Տէր զայն-
պիտան 'ի միջոյ Հայաստանեայց .
քանզի ըստ սրտառուչ բանիդ քոյոյ ,
ընդ Գրիստոսի լաւ է նոցա բնակիլ
եւ յԱբրահամեան հանգչել գոգս
եւ զՀրեշտակացն տեսանել պարա-
ւորութիւնս եւ ոչ 'ի քեզ , ողբալիդ
Հայաստան . որ ոչ ծանեար զպատիւ
ողւոցն անարատից . Ուստի անհո-
գող պրութեամբ մնացաք մեք եղ-
կելիք եւ ողորմելիք զըկեալք 'ի հայ-
րենի վերակացութենէն :

Եւ դու ո՛ր նոր Երեմիասդ Հայոց ,
Հայրդ Մովսէս . եթէ հայրական
բարբառովդ ողորմիլ կամիս Հայ-
աստանեայց եկեղեցւոյ , զհողացեալ
նշխարս բազկացդ տարածեա 'ի շիր-
մէդ առ Տէր եւ գոչեա մեծա-
ձայն իբրու զԵրեմիասն այն . Յիշ-
եա , Տէր , որ ինչ անցք անցին
ընդ մեզ . հայեաց 'ի տառապանս
որդւոցս Գրիգորի սուրբ Հօրն , զի
ահա ժառանգութիւն մեր դարձաւ
յօտարութիւն եւ բնակութիւն մեր

'ի նշդեհութիւն : Տէր ամենակալ ,
Աստուած Աբրահամու , անձինք նե-
ղեալք եւ հոգիք ձանձրացեալք
աղաղակեն առ քեզ . լուր Տէր եւ
ողորմեաց , զի 'ի քեզ յուսամք մի-
այն եւ ոչ 'ի մարդ : Որ անսպառդ
ես ողորմութեամբ եւ ոչ երբեք
նուազին գթութիւնք երկնաւոր
Հօրդ , հաշտեաց ընդ Հայաստան
եւ ցոյց մեզ զնշան սիրոյդ 'ի վե-
րայ Մասեաց եւ Այրարատայ կամար
ածեալ :

Պաշտ արկանեմք առաջի քո ըզ
Դաւթեան աղերս . Աստուած զօ-
րութեանց , դարձ հայեաց յերկնից
'ի սիրելի այդին քո , զոր տնկեալ
դարմանեցեր Գրիգորի բրտնավաստակ
աջովն : 'Իարձո , Տէր , զգերու-
թիւն հայկածին որդւոց որտից 'ի
յԱյրարատ , եւանել դիմել կրկին
'ի հայրենեաց բնականունդ գիրկն
եւ 'ի բաց թողուլ զփաղաքուշ
հեշտութիւն բաբիլօնեան :

Որ զպատկեր լուսնին կարգես
ունայնս եւ պատարունս ըստ Նա-
րեկեան հռետորին , արա եւ զայս
ընդ նաղելին Հայաստան , առ 'ի
յոյժ նուազութենէն . դարձուցեալ
վերստին 'ի լրումն առաջին ճոխա-
գոյն փառաց . զի դու ես պաշա-
պան նմին , Տէր :

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՔ :

Խորին մտածութեան մը մէջ էի ինչ ատեն կէս գիշեր-կը մօտենալ . եւ այնպէս կերեւէր ինձ՝ որպէս թէ հին ասորին խոնջ ու նռազեալ դիմացս կանգնած՝ ձեռքն ալ աւաղի ժամացոյց մը ունէր . ուսկից վերջին հասերը կ'սպառէին :

Ինչ ատեն անոր կնճռեալ ճակատը նայեցայ, եւ յիշատակութիւններն ալ զուարթ եւ տխուր դէպ 'ի յիս կը դառնային, ալ չի կրցայ համբերել՝ որ աւելի լուռ մնայ . վասն որոյ եւ անձկանօք մը ըսի :

Քո ինձի բերած օրհնութեանցդ համար, որոնք ամէն առաւօտ նուրդուած ու ամէն վայրկեան դաշար էին, շնորհակալ կըլլամ . բայց դուն էիր դարձեալ՝ որ այն սրտիս զրախ տին մէջ տնկած քանի մը յոյսերս արմատաքի խեցիր . որոնք իրենց փրկչապարդ կոկոններովը թափամեցան ու երբէք չի կենդանացան :

Իմ տուած ու առածներուս վրայ զԱստուած փառաւորէ ըսաց . քու գանձերդ երկնից մէջ տեղաւորէ, որ սիրտդ ալ այն տեղ գտնուի . այնքո լսածդ խամրեալ յոյսերը շատ անգամ արդարութեան պտուղներու փոխուած են :

Բայց՝ պատասխանեցի դուն սերելիներն ու պատուականերն ալ իմ աչացս տեսութենէն աներեւոյթ ըրած ես . որոնց հիմա դէմքերնուն վերայ ամպեր պատած աղաղակներուս ալ չեն պատասխաներ . մէկմալ չեն վերադառնար այն բնակութեանցը, զորոնք որ այն չափ գեղեցկացուցած էին, այն տեղերը՝ զորոնք որ երբեմն

կը ճաչնային ալ չեն ճանչնար :

Կրկնեց դարձեալ գոհութիւն տալը Աստուծոյ, եւ ինձի յանձն եւ զած բաներուն վրայ սիրտը մի խռովեր մի միայն քու հոգւոյդ փրկութիւնը ապահով ըրէ, որ դուն ալ անոնց քով երթալու եւ մէյմալ չի բաժանուելու պատրաստ ըլլաս : Իմ առ մարդիկ պաշտօնս լրացած է, ինձի համար գերեզմանիս դրան քարը բացուած է, հարկ է, որ ներս մտնեմ ու ջուրին տակը ժողովուած տարիներուն հետ թմրիմ մինչեւ որ վերջին փողը հնչուի :

Վաշտութեամբ մը անոր գունատ թափ ճակատին վրայ կը նայէի որն . որ ինձ համար գեղեցիկ էր . երանի թէ անոր աստակ քունքերուն բոլորակը դիզուած ձիւները մէկ դի սրբէի . բայց չթողուց ու մեռնելու տարածուեցաւ : Որուն քովը ծուռ կի վրայ եկած կըսէի . ո՞վ հրաժարող տարի . քու վերարկովդ մէջ ծալուած մագաղաթեայ տումար մը կը տեսնեմ . դատաստանին օրը արդեօք ինձ համար ի՞նչ վկայութիւններ պիտի բերէ :

Իւր վերջին ձայները թէպէտ ցած բայց երեւելի էին . ինչ ատեն ըսաց գիրքերը կը բացուին եւ մեռեալք ամենայն մեծ ու փոքր Աստուծոյ առջեւ կը ներկայանան՝ ան ատենը պիտի դիտնաս :

Իէս գիշերուան ժամը զարկաւ երես ծածկեցի ու անոր մահուանը վրայ կը տրտմէի, որն որ բարեկամի պէս եղած էր երբեմն ինձ : Յաւելով կը յիշէի՝ թէ քանի քանի անգամ անոր ազդարարութիւնները ու լարիք ընելու համար ինձ տուած

առիթները արհամարհած էի. նոյն պէս եւ ժամանակին հարստութիւնը այն անգին գանձը որն որ անժամա նակ Յաւիտենականութենէն մեզի շնորհուած էր՝ վատնած էի: Երբ այս պէս կը յիշատակէի կարծեցի որ հոգեվարք շրթունքներէն նուազ հառաչանք մը եկաւ այսպէս, « Այց բարեալ... բարեալ կաց »:

Այս վերջին հրաժարականին վրայ ինչ ատեն լալու եռանդ մը եկաւ վրաս, դարձեալ գլուխս վեր վերցուցի եւ ահա նոր տարին վախճանողին աեղը կանգնած՝ ժպտելով ու բարի փափագներով եւ ուրախական խօսքերով զիս կ'ողջունէր իմ բոլորաիքս ալ թէպէտ բարեկամութեան ու սիրոյ շատ մը յայտնի նշաններ կը տարածուէին, բայց ես զարհուրած էի որովհետեւ ինձ համար օտարական մի էր: Եւ ինչ ատեն կը պատրաստուէի, որ անոր գալուստը շնորհաւորեմ, շրթունքներս բաբախել սկսան ու չի կրցան բանմը արտաբերել եւ լռեցին:

Իմ այս աագնապս աեանելով, մի վախնար ըսաց, մի վախնար. ամէն բարեաց ու կատարեալ շնորհաց Տըւողէն կուգամ քեզ:

« Դոր տարիդ՝ պատասխանեցի՝ ուր պիտի առաջնորդես ինձ իմ անձինս համար ինչ բաժին մատուաւ կելու սահմանուած ես՝ ուրախութիւն, եթէ արտմութիւն, կեանք, եթէ մահ »:

Կրկեց՝ զայդ՝ ոչ ես գիտեմ, եւ ոչ ալ Աթուոյն մօտ եղող հրեշտակը, հապա միմեայն այն՝ որ որ անոր վրայ կը բազմի. ձեռքդ ինձ տուր ու ալ հարցմունք մի ըներ՝ քեզ

համար բաւական է, որ զիս ղրկողին կամք կատարեմ: Այս կամքը քուկըրէ որ բուն իսկ այս աշխարհիս վրայ ալ հրեշտակի մը երջանկութիւնը վայելես: Ես բանմը չեմ խոստանար քեզ. ինձ հետեւիլ ըլլայ քու հաւանութիւնդ: Այս արագընթաց վայրկեանը գոհութեամբ ընդունէ որ իմաստուն ըլլաս: Խնդրած բանդ իմ կամացս իշխանութեան տակ չէ, որ քեզի տալու ալ կարող ըլլամ: Սակայն՝ եթէ քեզի հետ մէկտեղ յառաջ պիտի քայլեմք մի մոռնար քու առջի վիճակդ. միայն այն ըլլայ մրտքիդ մէջ, որ այս տեղ յաւիտենականութեան համար պանդուխտ մի ես եթէ ուրախութեան բաժակ կը մատուցանեմ քեզ՝ գոհացող եղիր ու սգաւորաց ալ սփոխանք եւ զամէն մարդ իբրեւ եղբայր ճանչցիր քեզ: Իսկ եթէ դառնութեան միտւր քու շրթանցդ վրայ մածանի, լի անձկանօք օղնութիւնը մի ընդունիր. դուցէ քու հաւատքիդ տկարութիւնը կը յայտնես: Աստուծոյ ամենակատարեալ կարգադրութիւնը իմաստութիւն կուտայ. անոր համար երջանիկ համարէ զանունք՝ որոնք որ համբերել գիտեն ինչ ատեն առաւօտը արեւելքէն կը ծագի, ինքզինքդ քու պարտաւորութեանցդ պատրաստէ Հոգւոյն սրբոյ շնորհ-հօք:

Որովհետեւ Աստուած մօտ է անոնց՝ որոնք որ անոր կապաւինին, ու անոր շաւղաց մէջ կը զուարճանան:

Թարգ. Յանգլ. Սարգիս Գր:

Տ. Յովհաննէս Միրչայեանց:

ԱՆՍԱՆՁ ԼԵՋՈՒՔ
ԵՐԿՊԱՌԱԿԻՉՔ ՄԻՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲՐԻՍՏՈՍԻ

Որոց ոգիք խաղաղասէր են 'ի բնէ եւ երթան սրտիւ զհետ սիրոյ պատուիրանին Բրիստոսի եւ ըստ Պօղոսեան բարեհրաւէր խրատուն՝ ջանան ընդ ամենեւին զխաղաղութիւն առնել արդարեւ յոժ սրտմեալ ցաւին նոքա մինչ տեսանեն 'ի միահաւատ եւ միակրօն հարազատածին եղբարց եկեղեցւոյ՝ վէճ, հակառակութիւն, տարաձայն կ'սրծիր, յոչինչ պէտս բանակուութիւն ատելութեան կիրք եւ մանաւանդ չար եւ պարսաւելի երկպառակութիւն որոյ վասն ասէ երանելի Եղիշէ վարդապետն. « եթէ ուր սպրդեալ անկանի երկպառակութիւն. անդէն եւ երկնաւոր առաքելութիւնն հեռանայ » : Բանգի չէ եւ չէ հնար երբեք երկուց հակառակաց միաբանիլ ընդ միմիանս. ուր առելութիւն գոյ, անդէն տեղի տուեալ փախչի սէրն. ուր խաւարն է, անդ ոչ միաբանի լոյսն. ուր Բելիարն է. հալածի Բրիստոս անդաւստ իբրեւ յերեսաց շերովդէսի :

Օհնչ է երկնաւոր առաքելութիւնն, ասա զցանկալի Հայր, եթէ ոչ երկնապարգեւ տիրաւանդ կը տակն. զոր 'ի վերջնում աւուր այն ինչ բազմեալ յընթրիս հեզ վարդապետն Յիսուս խօսէր առ աշակերտսն. « Չխաղաղութիւն իմ թողում ձեզ, զխաղաղութիւն իմ տամ ձեզ » : Չայս երկնածիր շնորհ ետ եւ բաշխեաց առատապէս Տէրն սիրելի աշակերտացն իւրոց եւ 'ի ձեռս

նոցին սփռեաց համօրէն աշխարհի :

Այլ արդ ո՞ւր խաղութիւն եկեղեցւոյ ո՞ւր զուգութիւն միաբանութեան. ո՞ւր եղբայրական սիրոյ գրգռանք : Արդ փոխանակ այսոցիկ Աստուածահաճոյ առաքելութեանց տեսանեմք, զի տիրեալ է առ հասարակ հեռ, նախանձ, խռովութիւն, եւ 'իմի անդամս մարմնոյն Բրիստոսի պառակտումն չար : Որով իւրաքանչիւր անդամքն բաժանեալ ջանան զմի գլուխն Բրիստոս՝ իւրեանց սեփականել եւ չառնուն 'ի միտ երբեք անմիտք եւ թշուառականք, եթէ այս գրգռումն եւ հրապուրանք սատանային է. որ յամենայնի գուն դործէ հնարս հնարի եւ իբրեւ զօձ սողսկեսալ մտանել ջանայ 'ի Բրիստոսառնելի դրախտն եկեղեցւոյ առ 'ի բաժանել եւ պառակտել եւ հանել միանդամայն 'ի միութենէ եկեղեցւոյն, զայնս. ոչք կամակար մտօք ունկն մատուցանեն թելադրութեան նորին :

Աւաղ ասեմ այնպիսեացն. որոց ոչ քարոզեցաւ արդեօք տակաւին Առաքելոյն բան, թէ Բրիստոս վասն ամենեցուն մեռաւ. ընդէր, զի զամենեւին կեցուցէ, որք սրտի մտօք սիրեցին զյայտնութիւն նորա եւ հաւատացին աներկբայ. թէ նա իցէ որդի Աստուծոյ կենդանւոյ առաքեալ 'ի Հօրէ լոյս եւ փրկիչ կաշկանդելոյն եւ կապելոցն աղքատութեամբ 'ի ստուերս մահու :

() րինակաւ խառնակ եւ անսուրբ չորքոռանեաց եւ սողնոց եցոյց Տէր յայտնապէս Պետրոսի. եթէ բարբարոս ազինք, որք իբրեւ անսուրբ եւ պիղծ դեռունս համարին առաջիք՝ ձրի շնորհօք իմովք սրբեցան նոքին 'ի

պղծութեանց իւրեանց եւ անցեալք
՚ի ջուրն մկրտութեան մաքրեցան
եւ եղեն լուսազգեստք : Արդ մի
լիցի քեզ խորշելով պիղծս եւ գար-
շելիս համարել զգոսին անդիտու-
թեամբ . ընդ որս հաճեցաւ Աստ-
ուած եւ սրբեսց :

Այլ յետին յանդգնութեան այ-
նոցիկ . որք համարձակին առանց
խելձի մասց հերեալիոս անուամբ
պիղծ համարել զսուրբ զանդամս հա-
ղորդեալս Բրիտտոսի մարմնոց եւ
արեան եւ իբրեւ հերձուած եւ օտար
որոշել ՚ի նմանէ : Աստուած զու-
գեսց եւ միացոյց ընդ սիրելի որ-
դոյ իւրում գեկեղեցին հեթանո-
սաց նարահրաշ խորհրդով պեակ-
եալ . ով ես դու մարդ , որ զԱստ-
ուածադիր պսակն քսկել կամիս .
զանարատ եւ զմաքուր հարսն զուղ-
ղտփառ եկեղեցին ՚ի Բրիտտոսի ա-
ռադաստէն ժպրհիս սրտաքս մեր-
ժել . եւ որ յԱստուծոյ ծնան եւ
բնակարան եղեն բանին մանմա-
ցելոյ գրեցան , յորդեգրութիւն
Հօրն երկնաւորի , ոչ գիտեմ , որով
դատաստանաւ հանես եւ տարագիր
առնես զժառանգակից եղբարսն
Բրիտտոսի ՚ի հայրենի տանէն եւ
քեզէն եղեալ դատաւոր անիրաւ
զրկիչ լինիս հարազատ միածնունդ
եղբորդ : Եթէ համարիս Բրիտտոս
՚ի քեզ լինել ցոյց ուրեմն զնշան ,
որ է սէր . զի ծանկցեն ամենայն
մարդիկ . թէ ճշմարիտ աշակերտ եւ
աւանդապահ ես սիրոյ պատուիրա-
նին . եթէ գրեզ իբրեւ զուռ հաստա-
տեալ զխոսն ՚ի ճշմարիտ որթն Բրիտ-
տոս , անկեալ եւ մշակեալ ՚ի Հայր-
ատունկ այգին եկեղեցւոյ . բեր ու-

րեմն զգինին սիրոյ . եթէ համարիս
գող ՚ի քեզ հոգի գիտութեան եւ
շնորհաց . տուր զպտուղ նորին , այս
է սէր , խնդութիւն , խաղաղութիւն ,
եւ այլն :

Իսկ եթէ փոխանակ այսոցիկ՝
ընդ հակասակն ընթանաս եւ առ-
նես . ճանաչիս աշակերտ Բրիտտո-
սի՝ ոչ զընկերն սիրելով , այլ ատե-
լով եւ արհամարհելով . եւ որ իբրեւ
ուռ ընտիր պատուաստեալդ ես
յորթն Յիսուս , որպէս ժպրհիս ըզ-
Հօրն մշակութեան պաշտօն յա-
փշտակել եւ իշխանաբար ՚ի ձեռս
առեալ զսղոյն անզուսպ լեզուիդ
մտանես յայգին եկեղեցւոյ՝ եւ ա-
րագ արագ հատանել , կտրել եւ
քանցել կամիս զուռն ՚ի բաց իբրեւ
հերթիկոս եւ անհաւատ արկեալ
զնոսին միանգամայն ՚ի հնոց գե-
հեհին . փոխան անուշակ սիրոյ գին-
ւոյն՝ մատուակես ընկերիդ զդառն
բաժակ հերձուածորութեան եւ
ջանաս այդու արբուցանել եւ գլո-
րել զկանգնեալն :

Այս գործ է այնոցիկ , ոչ չա-
րախօս կան գեկեղեցւոյն Հայաս-
տանեայց լեզուաւ նենգաւորաւ .
եւ բանիւ պտելութեան պաշարել
ջանան զնա իբրեւ զանմոյն Յի-
սուս ՚ի գիրացեալ ցլուց դպրաց եւ
փաթիսեցւոց : Եւ եւթ կայ հեզ
եւ երկայնամիտ եկեղեցին Հայաս-
տանեայց առաջի այսպիսում ինքն-
իշխան եւ անիրաւ դատաւորաց .
բայց յընդունել յերեսս իւր զապ-
տակ սաստիակակիժ հերթիկոսու-
թեան ՚ի բաժանեալ համազգի ա-
պաշտօն ձեռաց , եւ յայլատեւ ե-
կեղեցականաց բրիտտոնէից . ոչ եր-

բէք հանդուրժել կարէ . այլ զաչս բանից ճշմարտութեան դարձուցեալ առ հարկանիչս ծնօթից իւրոց հարցանել իրաւունս համարի այսու բանիւ : Եթէ իցէ ինչ բիծ , արատ , կամ չարամիաութիւն ՚ի հաւատս եւ ՚ի կրօնս : Հայաստանեայց եկեղեցւոյ՝ ցուցէք եւ վկայեցէք իրաւացի եւ ուղիղ դատաստանաւ ճշմարտութեան : Իսկ եթէ զայս առնել ոչ կարացիք մինչեւ ցոյժմ եւ չկարեք եւս այսուհետեւ . ընդ էր ապա յանդգնիք հակառակ ճիշմարտութեան սպտակը ածել ՚ի գէմն արդար եւ ուղղագաւան եւ կեղեցւոյն Հայոց եւ ընդ աչս դատելով՝ դատապարտել զանմեղն եւ զանարատն :

Աւր ես , քաջահնչող փողդ Լամբրօնեան երանելիդ Ներսէս , եկ աւասիկ անաչառ բանիւդ յանդիմանեա սաստեա եւ լռեցո զապերասան լեզուս այնոցիկ . որք ըստ փարիսեցւոյն պարծենալով աղաղակեն . « Գոհանամք զքէն , հայր , զի ոչ արարեր զմեզ իբրեւ զայս հերետիկոս եւ հերձուածող : Որ զիստ կըշտամբութիւն բանիդ եւ առ համազգի եկեղեցին ուղղելով ընդ նոյն դատաստանաւ արկանես զնա . որպէս թէ Հայն եւս աղաղակէ . Գոհանամ զքէն տէր , զի ոչ արարեր զիս իբրեւ զԼատին կամ զՅոյն : Ոչ ոչ , Հայր , մի ասեր զայդ յաղագս ընդ հանուր Բրիտոսահմն եւ Լուսաւորչածին եկեղեցւոյն . այլ վասն սակաւուց ոմանց . որք թողին զԱյրարատ եւ չողան յիտալիա : Բանդի ողջամիտ եւ վեհանձն եւ կեղեցին Հայաստանեայց ոչ եր-

բէք թիւր եւ անուղիղ դատաստանաւ դատապարտէ զայլ . Բրիտոնեայս իբրեւ հերետիկոս կամ հերձուածող . այլ առանց խտրութեան ՚ի սրտէ սիրելով ողջագուրէ եւ զրգէ զհամօրէն տյլասեռ Բրիտոնեայս իբրեւ եղբայր եւ սիրելի համարի զնոսին . որք հաւատակից են ինքեան եւ աներկբայ մօտք ընդունին զհոգիախօս Հանդանակին հաւատոյ միաժողով սուրբ Հարցն եւ կամակար յօժարութեամբ երթան զհեռ անառելիւր լուսաշաւիղ ընթացից նոցին ճշմարիտ աւանդութեանցն եւ կարգայն . զորս միտքանութեամբ սահմանեցին եւ բռնելի սուրբ Հայրապետքն ՚ի հրաւիրմանէ Հոգւոյն Ժողովեալք ՚ի միասին :

Աւասիկ եկեղեցին Հայաստանեայց բարձր եւ պայծառափայլ դըրօշակաւ սիրոյս այսմիկ ծածանեալ ՚ի կատար ծայրին Սթուդիկէ եկեղեցւոյն Էջմիածնի հանդէպ համայնից աչաց , ճանաչի . գու ճշմարիտ տշակերտ Յիսուսի . քանզի ոչ աչառանօք կամ պատրուակաւ կեղծաւորութեան ունի զհաւատն իւր ծածկեալ . այլ իբրեւ քաղաք անթաքուտ կառուցեալ ՚ի վերայ լեւրինն Այրարատայ ՚ի տես համօրէն աշխարհի եւ իբրեւ եօթնաջանան աշտանակ ճշմարիտ եւ ստոյգ դաւանութեան լուսով լուցեալ վառի անաղօտ նշուիւք եւ որպէս ակնարեւու՝ լուսապայծառ տեսանի աչացն այնոցիկ , որոց բիւքն պարզ եւ յստակագոյն են : Իսկ որոց պղտորեալ են աչք մտաց առեւրութեամբ , հակառակսիրութեամբ ,

կամակոր եւ յամառ կուրութեամբ՝ ոչ կամին իբաց սրբել յաչաց իւրեանց զաղոն եւ զբիժն . որով հայել կարիցեն ի յտակութիւն լուսոյն հաւատոյ ուղղափառ եկեղեցւոյն Հայաստանեայց :

Ոչ ապաքէն այսպիսի կամովին կուրութիւն չէ հեռի ի հրէական կուրութենէն . զոր յոյժ յանդիմանէ Յիսուս ինքնախօս բանիւն . թէ « Լոյսն եկն յաշխարհ եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան ըզլոյս » : Էր վասն . զի էին գործք իւրեանց չարութեան . որ եւ զսոմանէ խօսի բացայայտ վարդապետութեամբն . « Չի ամենայն որ զչար գործէ՝ առեայ զլոյս եւ ոչ դայ առ լոյսն , զի մի յանդիմանեսցին գործք նորա . իսկ որ առնէ զճմարտութիւն , դայ առ լոյսն . զի յայտնի լիցին գործք նորա թէ Աստուծով գործեցան » :

Ո՞րք էին արդեօք այն խաւարատէր մարդիկ , որոց գործք չար էին առաջի Աստուծոյ , մի թէ հաւօրէն Հրէաստան , ոչ , այլ առաւել դպիրքն եւ փարիսեցւոյն . որք պատրուակաւ կեղծաւորութեան ցուցանէին . զանձինս առաջի մարդկան իբրեւ արդարք եւ ճմարտաբասակայն նման գերեզմանաց բռերոց արտաբուստ երեւեալք վայելազարդ եւ գեղեցիկ , այլ ի ներքուստ ոսկերօք չարութեան լցեալք : Ասան որոյ խորշէին եւ փախչէին ի լուսոյն ճմարտութեան , որ ջրէր ի Հրէաստանի եւ յանդիմանէր ըզգաղանադործ չարութիւնս նոցին : Յորմէ արտմտեալ սաստիկ՝ սրէին զլեզուն իւրեանց պէս պէս բան .

իւք բամբասանաց եւ յանդգնէին բանալ զբերանս իւրեանց մինչեւ յերկինս հանդէպ համատարած աշխարհալոյս արեգականն . մինչեւ կոչել զնա խաւար , զբարին . հայրատուր իբրեւ զչար , զբաղցրութիւն Մանանային թագուցելոյ իբրեւ ըզգառն . որով արժանապէս ձգեցին յանձինս իւրեանց զսպառնալից վոյն Եսայեայ Մարգարէին :

Եւ աստ մի կարծեր դու , ո՞վ սիրելի ընթերցող , եթէ աղանդն դպրաց եւ փարիսեցւոց ի Հրէական եկեղեցւոյն էին միայն . զի ահա եւ Քրիստոսի կաթուղիկէ յեկեղեցւոյն եւս գտանին նոյն աղանդից հետեւող աշակերտք բազմաթիւ . որք զինեալ հակառակ ճմարտութեան՝ զողջոյն ազգ մի իբրեւ հերիտիկոս եւ հերժուածող բամբասեն եւ իբրեւ գերագոյն իշխանք եւ դատաւորք յառաջ քան զժամանակն աթոռս արկեալ նստին յեկեղեցւոյ , խօսին ամբարտաւանութեամբ եւ վճիռ հատեալ դատապարտեն զորս եւ կամին . զնոցաւ իւրեանց արարեալ բանալի փականաց երկնից , եւ դրան կաթուղիկէ եկեղեցւոյն . փակեն ընդ դէմ սցնոցիկ , որոց բացեալ է Քրիստոս եւ ըստ նմանութեան փարիսեցւոյն՝ ինքեանք ոչ մտանեն . եւ որ մտանեն՝ արդեւուն՝ հերիտիկոսական նշովիւք բանադրեալ արտաքս մերժելով :

Ո՞վ Աստուածընդէմ ինքնարդոյ իշխանութեանց նոցին . որք զամբարհաւաճ ախտ երկնաթափ արուսեկին յոգիս կրեալ յանդգնին աւել . « Դիցուք զաթառ մեր յերկեղեցւոյ եւ լիցուք գերագոյն դա-

տաւոր, հաւասար Բրիտանիոյ ։

Գիտեմ հաւաստեալ, ով Հայր, զի դու զամենայն դատաստան եւ տուր որդւոյ քում եւ կացուցեր ըզնա իշխան ՚ի վերայ ձեռակերտ եւ կեղեցւոյ իւրում . այլ մարդիկ մահ կանացուք մոռացեալ զչափ տկարութեան իւրեանց եւ անտիւք վառասիրութեան պաշարեալ յանփշտակել կամին յորդւոյ քումմէ զառ ՚ի քէն տուեալ իշխանական պատիւն . եւ որ իբրեւ պաշտօնեայ եւ սքաւաւոր կարգեցան Աւետարանին . արդ իբրեւ տէր եւ դատաւոր եւ իշխան եւ փրկիչ պարծին եւ չամալեն երբեք : Եւ առաւել քան զայս, դաւազան երկաթի խիտ եւ բուռն իշխանութեան ՚ի ձեռս առեալ մտանեն ՚ի գաւիթ ոչխարացն . ՚ի զբար եւ արապարտ արտաքս հանեն ՚ի փարախէ անտի զամբողջ հօտ բլւրաւոր խաչանց ուրջելով զնոսին ՚ի բաց իբրեւ անառողջ եւ հիւանդ ՚ի հաւատս ։

Ար սպառնայիր երբեմն ՚ի վերայ հովուացն Խորայէլի, մարդարէդ Եզեկիէլ, սպառնացիր եւ արդ իբրեւ ՚ի Տեառնէ ՚ի վերայ հովուացն եկեղեցւոյն Բրիտանիոյ . « Այսպէս ասէ Տէր Տէր . ահաւասիկ ես ՚ի վերայ հովուացդ . եւ պահանջեցից զխաչինս իմ ՚ի ձեռաց դոցա . . . եւ փրկեցից զխաչինս իմ ՚ի ձեռաց դոցա եւ ոչ եւս եղեցին դոցա ՚ի կերակուր . . . Ես արածեցից զխաչինս եւ ես հանդուցից ըզնոսա . . . զկորուսեալն խնդրեցից , զմոլորեալն դարձուցից , զբեկեալն պատեցից , եւ զլուեալն զօրացուցից , զդէրն եւ զհզօրն պահեցից եւ ա-

րածեցից զնոսա իրաւամբք » ։

Երբ այս , հօտաւեր Հովիւ դքաջ փոքրիկ հօտին քոյ . եւ եւ այժմ ՚ի խնդիր Աստուածային այցելուութեամբ . զի ահա , վայրատեալ ցրուին ոչխարք արօտի քո եւ ասանդ Թափառեալ անկանին ՚ի ձեռս գայլոց եւ դողոց : Ո՞վ իբրեւ զքեզ խնդրիցէ զնոսին . ով երթիցէ զհեռ կորուսելոցն . ով բարձեալ ՚ի վերայ ուսոցն վերստին դարձուցէ ՚ի փարախն քո : Հովիւք , որոց հաւատացաւ ՚ի քէն հաւատարմութեամբ արածել զոչխարս քո . ահա նոքին խակ փոխանակ ժողովելոյն լինին վարատիչ եւ ցրուիչ . փոխանակ պատելոյ զվիրաւորան ՚ի գայլոց՝ եւս առաւել յաւելուն վէրս եւ հարուածս . փոխանակ դարձանելոյն ՚ի դարարիս եւ ՚ի ջուրս հօնգետեան թողուն Թափառիլ խաչանց ՚ի բարձրաւանդակ վայրս եւ գահաւիժիլ , փոխանակ կոչելոյ զնոսին ՚ի գաւիթ միութեան եկեղեցւոյ քաղցրալուր փողով քաթողութեան . ո՞հ , անընտանի եւ օտար ձայնիւ նորահնար վարդապետութեան , եւս առաւել խրեցուցեալ հեռացուցանեն ՚ի դրանէ գաւթին . որով ոչխարք հօտին Բրիտանիոյ երկպառակեալ բաժանին ՚ի մի մեանց ։

Ո՞վ մեծի աղէտիցս . հովիւն քաջ Յիսուս խօսէր երբեմն , « Աս եւս այլ եւս ոչխարք են իմ , որ ոչ են յայսմ գաւթէ . եւ զայնս եւս պարտէ ինձ ածել այսր եւ ձայնի իմում լուիցեն եւ եղիցեն մի հօտ եւ մի հովիւ » ։ Այո տէր , դու յերկինս գողով անտեսաբար կոչես եւ ածես ՚ի հեռաստանէ յամենայն ազգաց

եւ երկրի իդաւիթ միութեան կա-
թողիկէ եկեղեցւոյ քում. զի բազ-
մապի թիւ ընտրեալ զաւակաց
հրաշածին նորոյդ Իսահակայ առա-
ւել քան զաւագ ծովու եւ իբեզ
օրհնեացին ամենայն ազգք երկրի :

Այլ զինչ ասացից հովուացն
այնոցիկ . որք իբէն կառավարիչ
կարգեցան իւրաքանչիւր ազգաց եւ
կեղեցեաց առաքելական պաշտօնիւ
յաջորդեալք . ահա նորա են իսկ,
որ զընտրեալս եւ զածեալս քո ի
փարախդ Աստուածային ընդդէմ
կացեալ ի դրանէ գաւթին արտաքս
մերժեն : Եւ ոչ միայն այս , այլ եւ
զանխորտակելի երկաթեայ հովուա-
կան գաւազան քոյն յափշտակեալ
ի ձեռանէ հզօր թագաւորիդ՝ մը-
տանեն ի փարախառեղ խաշանց եւ
նովմք հարեալ անհնարին հարուա-
ծովք վիրաւորեն , զմակաղեալ եւ
ի մի ժողովեալ զհօտն եւ արտաքս
հանեալ ցիր եւ ցան արկանեն : Սո-
քա են ահա , Տէր , որոց վասն դու-
շակեցեր յառաջագոյն , թէ « Որ ոչ
ժողովէ ընդիս , ցրուէ » . որք ան-
խնայաբար ցրուեն եւ վատենն ըզ-
խաշինս արօտի քո . զոր ստացար
դու սքանչելիդ նոր Յակոբ ի տուն
աշխարհիս Լաբանայ լեալ հովիւ եւ
վարձկան , զցայդ եւ զցերեկ ցրտա-
հար , եւ տօթակէզ աշխատեալ տը-
նօրէնութեամբ եւ չարչարանօք խա-
չիդ : Չունին փոյթ յանձինս իբրեւ
զանձնանուէր հովիւդ՝ սրտացաւ
լինել ի վերայ հօտին , զցրուեալսն
ժողովելով զկորուսեալսն դռանելով ,
զմոլորեալսն խնդրելով , զբեկեալսն
պատելով , զյափշտակեալսն ի գայ-
լոց՝ ազատելով եւ վերստին ի փա-

րախն հաւաքելով : Փոխանակ այս
հայրական խնամոց , զինչ , ասա դու
եւ աւասիկ ողբասէրդ Մովսէս .
« Ինքեանք իսկ գայլք եղեալ զիւր-
եանց հօտս գիշատելով » :

Այսպէս ահա , ո՞ր ուշիմդ ընթեր-
ցող քաջ ի միտ առ . թէ այս ամե-
նայն չարեաց երկպառակութեան
պատճառ չիք այլինչ . բայց եթէ
չափազանց իշխանական տիրողու-
թիւն ըստ կարգի աշխարհաց . նո-
րագիւտ եւ օտարաձայն վարդապե-
տութեամբ այժմեան դարուս . Աս-
տուածաբան կարծեցեացն . սրբ
յետս կասեալ յանսայթաք շաւղաց
վարդապետութեան սուրբ Հարցն
առաջնոց , իբրեւ անհաւանք ծնու-
ղաց՝ նոր վարդապետութիւնս հնա-
րեն : Ոմն զգահն իւր գերամբարձ
իշխանութեամբ եղեալ յեկեղեցւոյ
Հռովմայ հրամայէ չորեքժպեան
աշխարհաց հաւատացեալ ժողովոցոց
եւ հոմիլիան հովուաց . զի ամենե-
քին իբրեւ հլու եւ հպատակ շուք
եւ պատիւ հարցեն առաջի իւր ,
ճանաչելով զնա փոխան Բրիտոսի
գլուխ տիեզերական կաթողիկէ ե-
կեղեցւոյ : Ոմն եւս իսակո ամբող-
ջութիւն ազգին պահելոյ առ հա-
սարակ զամենայն քրիստոնեայս ոչ
միայն իբրեւ լոկ հերիտիկոս . այլ
իբրեւ անհաւատ համարի եւ կրկ-
նակի մկրտութեան օրէնո սահմա-
նադրէ հակառակ տիեզերական ժո-
ղովոց : Որով զմկրտութիւնս այլա-
սեռ քրիստոնէից անլաւեր համարե-
լով համարձակի առանց խղճի մը-
տաց զմկրտեալսն կրկին մկրտել :

Իսկ դու , ո՞վ իբրեւ հերետիկոս
դատեալ ի սոցունց եկեղեցիդ Հայ-

աստանեայց, որ աղառի ես յայսպիսի
օտար ուսմանց. եթ ուղիղ մտօք
զհետ անստերիւք սահմանաց սուրբ
Հարցն քոց որպէս եւ գնատ. ալ-
ձանացիր անշարժ մտօք յուղղութիւն
հաւատոց, կրօնից, պաշտամանց,
աւանդութեանց եւ ճշմարիտ վար-
դապետութեանց նոցին, կաց հաս-
տատ իբրու զՄաթիսն այն ընդդէմ
բռնաշունչ հողմոց. Մի սրտնիր,
մի տագնապիր, մի խուճապիր. թէ
յարկցեն ՚ի վերայ քո ճակատամար-
տից անսանձ լեզուք եւ տիգօք հե-

րետիկոսութեան խոցոտեցեն ըզ-
քեզ. մի երկնչիր, ոչ երբէք կարեն
սուրբ նշովախօս լեզուաց եւ գրու-
չաց նոցին հարուածել կամ կտրել
զքեզ ՚ի միութենէ Բրիտոսական
եկեղեցւոյն. առ որ հաստատեալի
ես իբրեւ ՚ի վէմն անշարժելի: Եւ որ
շինեալի ես ոչ մարդկան. այլ Յի-
սուս Միածնին ձեռամբ. որ էջն
յերկնից եւ ոսկի ուռամբ խորա-
գոյն եղ զհիմն քոյն. զի յաւիտ-
եան անխախտ կացցես ՚ի միջակին
Այրարատայ:

ՉԼՓԵԿԸՆ ԻՆՆՔ

ՅԵՐԷԽԵԱԼ ՄԵԺԱԳՈՒԴՅԻ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԱՐԳԱՐ ԱՆՈՒՄ

ԹԵԼԻՄԱՐԻՏԱՆ ՎԱՆԵՅՈՒՅ:

(Երաջարութիւն եւ վերջ)

Եթ լեզուք եթէ ձեռամբ կրօնահարէ զանաւագն,
ճընէ զքեզ զընկերն անկար, միջնորդ Մովսէս ոչ մընաց:
Մեծնայն որ խորհի մըտօք խարդաւանօք իրա առնել,
ծակեալ ըզծուս հանեն զգեղեցուց, պարզամիտ որ ոչ մընաց:
Օգտնողն անխիղճ, գընողն անկար, երկուքն եւս յոյժ ողորմելիք,
միջն հողուով, միւսն մարմնով, երջանիկ որ ոչ մընաց:
Արդ ուր իցէ վերջ աշխարհիս, գիտեմ զի գոյ կատարած,
աշխարհ բոլոր լըցաւ չարեօք, բարեաց տեղի ոչ մընաց:
Օգտալուստ նեոին զի հարցանես, ուր եւ իցես հանդէս գայ,
նեոինք բազումք գոն յաշխարհի, բայց Եղեա ոչ մընաց:
Մեր աշխարհիս այս անցաւոր քարշէ զմարդիկ միշտ ՚ի վայր:
պատրէ, խաբէ, կորուսանէ, լուրջ եւ զգաստ ոչ մընաց:
Չարք ընդ բարիս բընակելով, առ հասարակ չարացան.
արդար ազատ եւ անաբատ Ղովա մի երբէք ոչ մընաց:
Սատան առիւծ ելեալ շրջէ որսալ զմարդիկ ՚ի կորուստ.
անկան բազումք ՚ի կարթ մահուն, ըզգուշացող ոչ մընաց:
Սուտ կեղծաւորք, եւ շողջորթք, սուրբ եւ արդար ձեւանան.
անոյշ քընքուշ լեզուաւ պատրեն, պարզ եւ անկեղծ ոչ մընաց:

Նաղըստերես եւ դէմք զըւարթ , կարծես թէ լոյս է եւ հրեշտակ .
այլ 'ի սրբոյն դարանին չարք , սիրտ առաք մաքուր ոչ մընաց :
Սարգահաճոյք եւ հացկատակք պատուով բազմին 'ի սեղան .
ուտեն , ըմպեն եւ արեւնան , հաց համեստից ոչ մընաց :
Բերանք անդուռն , լեզուք անսանձք , արձակ արձակ բարբառին .
զըրցոյք անհամ եւ բանք անաղ , չափ բերանոյ ոչ մընաց :
Ո՛ր պատկառանք , ո՛ր խրտրութիւն 'ի մէջ մեծաց եւ փոքունց .
յարգանք ծերոց , պատիւ ծնողաց , թէ խնդրես դու ոչ մընաց :
Հարք հեղգատիրոք , եւ մայրք տբխմար , անկիրթ անանկն զաւակունք .
ծնողքն են հաղորդ չարեաց որդւոց , դատարարակ ոչ մընաց :
Ո՛ր արժողն անկիրթ , վարժեալն անմիտ , մեծն անխմատ փոքրիկն վատ .
գիտունն անդէտ , գիտակն անպէտ , համայնից հոտ ոչ մընաց :
Խեղճն է խել , խելառն է դել , որ գեղերի աստանդեալ .
չանք անխառնակ , վաստակք անյադ , խելացի որ ոչ մընաց :
Տուն եւ տեղիք դատաստանաց յեղուղակաց են դարանք .
զերթ եւ եկեղս կողպտուլով , դատ իրաւունք ոչ մընաց :
Կըշխեալ եւ չափ , առնուլ եւ տալ , սիրտ եւ լեզուք խարդախեալ .
խօսի ճարտիկն , խաբի ռամիկն , արդար զաճառ ոչ մընաց :
Ո՛մն 'ի խընել , ո՛մն 'ի կըլնել զվաստակս այլոց ուտելով .
այլիք ողբան , տընանիք հեծեն , լըսող ձայնից ոչ մընաց :
Իշխանքն են յոյժ վըրիժագործք , սիրեն զկաշառս իրաւանց .
զըրկեալն յերկինս աղաղակէ , դուրթ իշխանաց ոչ մընաց :
Օ՛ր թաւթ 'ի վարժոյ տալ ջանան եւ շահ առնեն յանկարէն .
մատնեն 'ի բանտ եւ 'ի շըլթայ , ո՛հ , արձակող ոչ մընաց :
Փոխ տան միայն բարեկամաց , եւ եթ սիրեն սիրելիս .
խեղճ՝ եւ անկար կարօտելոյն ձըրի բաշխող ոչ մընաց :
Խփրտ բազմաց բռնեալ բազմի ագահութեան չար գազան .
զերթ ըզվիշապ ուտէ անյադ , չափ կըշտութեան ոչ մընաց :
Կարգ եւ սահման բարուց մարդկան խանդարեցան արդ բնաւին .
պարկեշտութիւն եւ պատկառանք յուամէ՞ խընդրես ոչ մընաց :
Ուտեցէք ձիւտին դըստեք լեկտին անժուժաբար ընդ իրեսիրս .
առաք պատուական ամուսնութեան մաքուր պըտակ ոչ մընաց :
Կանայք անբող մերկ բացերես շըրջին 'ի մէջ փողոցաց .
նման Սարայի եւ Ռեբեկայ կին ամօթխած ոչ մընաց :
Իզուր խրատես , Պօղոսըք քաջ , գլուխն ըսքողել պարտ է կնոջ :
եղծաւ բնաւին արդ այս օրէնք , լըսող բանիդ ոչ մընաց :
Տիկին յոտին կայ 'ի սպասու իբր աղախին ծառայէ .
տիկինն 'ի դուրս , ծառայն 'ի տան , ամօթ երկիւղ ոչ մընաց :
Շառայք նրման տերանց շարժին բազմեալ բարձին վըքանան .
տէր ծառային յոտին կացեալ , երկոցունց կարգ ոչ մընաց :

Չեւք ըզգեստուց յոյժ անպարկեշտ, Բրիտոնէից անկայել.
 միշտ նորաձեւըս հընարեն. զարդ վայելուչ ոչ մընաց:
 Օձք խորագէտք յոյժ յիմարեալ, զլաւն ՚ի վառեն ոչ ընտրեն:
 աղաւնիք ոչ միամիտք, սողնոց սահման չբմընաց:
 Անգէտք տըգէտք եւ իմաստակք լեալ շաղակրատ բարբանջեն.
 խաբին լըսողք եւ հաւատան, բերան պարկեշտ ոչ մընաց:
 Աղուէսք փոքունք գաղտիկ շքընին, ՚ի նոր այգին տիրաւունկ.
 ուսեն ճըմլեն զբընքուշ ոգկոյզս, լուրջ այգեպան ոչ մընաց:
 Դայլք ըզ գառանց գեղմն ըզգեցեալ մըտեալ շքընին ՚ի փարախն.
 պառակտելով ցրուեն զոչտարս, հըսկող հովիւ ոչ մընաց:
 Լբարձ, աւանդ, Տէրն եւ ՚իմէնջ որպէս յազգէն շքընից.
 առ ՚ի պատիժ մեզ եւ նոցա, հզօր եւ արի այր ոչ մընաց:
 Ըրդ պաշարէ սատան զմեօք Հողէփէռնէսն բըռնաւոր.
 ով առնաբար ելցէ ընդդէմ, յաղթող Յուժիդ ոչ մընաց:
 Ամենայն ոք պարծի ինքնին թէ իմաստուն է եւ.բաջ.
 ուր իմաստուն, ուր արդ քըննիչ, նըշյլ նըշմար ոչ մընաց:
 Սանկունք յատեան բազմեալ խօսին, ծերք յատենէն տարամերժ.
 այլ ոչ յարգին բանքըն ձերոց, խորհրդական ոչ մընաց:
 Եկ Եսայի, տես աւափիկ, թէ զի մանուկն ընդ ծերոյ.
 հարեալ վիճի պայքարելով, մանուկ պատկառ ոչ մընաց:
 Չարքն ընդ չարեացն միաբանեալ շինեն դարձեալ զաշտարակ.
 խորհին զխորհուրդ ամբարտաւան, Նոյ չհաւանող ոչ մընաց:
 Սիրտ համայնից նանրախորհուրդ, բերան բազմաց չարախօս.
 շունչ դարշահոտ, գոյն անհամբոյր, դէմք զուարթաւատ ոչ մընաց:
 Շքընունք բազմաց սէր գուշակեն. քաղցր եւ անուշ խօսելով.
 այլ ՚ի սենեակ սըրտից ծածուկ կորեակ մի սէր ոչ մընաց:
 Սէր անուն սէր, ուր է արդեօք, յուամէ հարցից խընդրելով.
 ՚ի հարազատ եղբայր անգամ սէր անարատ ոչ մընաց:
 Արդ ուր իցէ վերջին դալուստ հասիր, ով Տէր դու ՚ի դատ.
 մեղք մեր ծովու նըման զեղեալ, կաթ մի բարեաց ոչ մընաց:
 Եկ արդ, ով դու որդի մարդոյ Յիսուս փրկիչ աշխարհի.
 ոհ կորընչիմք անյուսութեամբ. քեզ յուսացող ոչ մընաց.
 Թէ յամեսցիս ոչ գըտանես դանկ մի հաւատ ՚ի յերկրի.
 արդէն իսպառ անհետացաւ, հաւատ երբէք ոչ մընաց:
 Այլ զի՞նչ խորհիս, անձն իմ դերի, հայեաց ՚ի քեզ վայեաւ միշտ.
 բոց փրացդ գեղ եւ դարման բաց ՚ի միոյն ոչ մընաց:
 Յուսայ ՚ի Տէր խոստովան լեր, ՚ի խոր սըրտէ գոռա միշտ.
 ընկեա ՚ի նա ըզհոգըս քօ, յայլմէ խընամ ոչ մընաց:

1870

Wm. S. Appleton & Co.

NEW YORK

THE NEW YORK PUBLIC LIBRARY, ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

NEW YORK

THE NEW YORK PUBLIC LIBRARY, ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

NEW YORK

THE NEW YORK PUBLIC LIBRARY, ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

THE NEW YORK PUBLIC LIBRARY, ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

NEW YORK

THE NEW YORK PUBLIC LIBRARY, ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

NEW YORK

THE NEW YORK PUBLIC LIBRARY, ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

THE NEW YORK PUBLIC LIBRARY, ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

NEW YORK

THE NEW YORK PUBLIC LIBRARY, ASTOR LENOX AND TILDEN FOUNDATIONS

NEW YORK

ՅԵՆԿ

ՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ ՆՈՒԹՈՅ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Նոր Աթուին Մովսէսի սկիզբն նորոյ տալոյս լայ զանցնաողարձ փառս Հարստան աշխարհին մերոյ : 113

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Հին եւ նոր տարիք : 118

Անանձ լեզուք երկպառակիւք միտ Թէան եկեղեցւոյ Բրիտանի : 120

ՉԱՓԱԿԱՆ ԲԱՆՔ

Յօրինեալ Մեծատոմարի Հանգուցեալ Մարգար Աղայի Թօխմարտեան Վանեցւոյ : 126

ՊԱՅՄԱՆԻ ԲՆԿԵՐԵՂԻՈՒԹԵԼՆ

Տարեկան գին 40 դուռուշ :

Մի ամսեայ տեարակին 4 :

Պօլսն դուրսը երթալու ճամբուն ծախքը առնող պիտի վճարէ :

ՏԵՂԻՔ ՍՏՈՐԵՂԻՈՒԹԵԼՆ ԵՒ ՍՏԵՅՄԵՆ

Ի Պօլս գրավաճառ պարոն Յարութիւնին եւ պարոն Պաղտատարին սենեակները որ 'ի Մէրճան :

Ի Զմիւռին ուսումնասեր պարոն Սարգիս Գրիգորեան տէր Յովնանու Մ/րզայեանց վանանդեցի :

Ի Վարին տէր Ներսիսեանց մեծարդոյ Խ սչատուր խան :

Ի Բերկա վճառատուն Ալզ սաէ : Յովնանու Աւայի Միսաքեան :

Ի Վան Թէրլէմէղեան պարոն Մկրտիչ :